որոյ վրայ շինուած է Պարսից մէջիլը։ Այս Զամախի քաղաքամիջին այն բարձր տեղումը, որ նայում է դէպի Պարսից քաղաքամասն — պատմում են լինել Զիրուան շահի պալատը, որոյ տեղումն շինել են, ինչպէս ասում են, Հայոց եկեղեցին, որոյ մօտ է և Ղռալ խանի պալատը, որ այժմ Լալայեանց փառաւոր տներն են, և այս տների արեւելեան շինուածոց ներքեւ է Զիրուան շահի դերեզմանը փոքրիկ դռնակով, ուր ուխտ են գնում պարսիկները, և անուանում են Փիրանի Զիրուան։ Ինչպէս պատմում են, քաղաքիս շրջապատումն եղել է քարեայ պարիսպ, բայց քաղաքի դիրքը անյարմար և զառիվայր լինելով՝ պարսպի տեղն ու հետքը չի երեւում[1])։

Զամախի քաղաքի հիւսիսային եզրին կան երկու հին դերեզմանք, որոց վրայ կանգնած են մի մի արձանաքարինք. սոցա վրայի գրերն արաբական կերեւին, բայց շրջապատերն զարդարուած են խաչանիշ գարդերով այնպէս՝ մինչեւ կարծել թէ Քրիստոնէից դերեզմանք են։ Զամախի քաղաքն եւս Աղուանից շատ քաղաքների հետ կրել է շատ նեղութիւն, սուր, աւերած եւայլն՝ Ցաճկաց, Պարսից, Արաբաց, Լեզգեաց և Չէրքէզաց ձեռօքն, որք մէկը միւսի վերայ յարձակուելով, աշխատել են խլել միմեանցից Աղուանից աշխարհը մինչեւ Լանկթամուրը բոլոր Աղուանից ազգը քշեց տարաւ Սմրղանդի կողմերը և հաստատեց նոր Աղուանստանը։

Յետ այնր այս երկրին տիրեցին Օսմանցիք. սրանցից խլեցին պարսիկները, և վերջապէս այս վերջին դարու սկզբներում տիրեցին ռուսք։

Այս Զամախի քաղաքումն 1417 թուին նահատակուեցաւ ս. Սահակ վարդապետը, որ Դավրիժեցի Յիսուսի պարսիկն էր յառաջ, որոյ և մարմինը այրեցին տաճիկները. իսկ Քարքանջի հայերը փոշին տանելով իրենց գիւղը՝ վրէն մատուռ են շինել, որոյ համար ընդարձակ գրելեմ նոյն

---

[1])Զամախւոյ բերդապարիսպը շինել է տուել 1583 թուին Օսմանցւոց Փահրատ փաշայն, ինչպէս նաեւ Երեւանայ և Նախիջեւանայ բերդերը։ "Այ. բարատ„ Ալիշանի. յերես 301։